Կին և քաղաքականությունը

Անվճար հավելված

2012 մայիս

Ռադմիլա Շեկիրինսկան դրական գնահատեց կանանց ներկայացվածությունը կուսակցությունների նախընտրական ցուցակներում

էջ 2

Մայիսի 6-ին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքներով՝ հինգերորդ գումարման Ազգային ժողովում 14 կին պատգամավոր է ընդգրկվել՝ երկուսով ավելի, քան նախորդ գումարման կազմում:

Դե յուրե - Դե ֆակտո

Քվոտայի մեկամորֆոզները

Տոկոսային հարաբերակցությամբ կանանց ներկայացվածությունը նոր խորհրդարանում 10,6% է, ինչը նշանակում է, որ բարձրացնելով գենդերային քվոտան մինչև 20 տոկոս և ներկայացնելով հանրությանը համամասնական ցուցակներում միջինը 22,8% կին, կուսակցությունները դե ֆակտո՝ որպես արդյունք, խորհրդարանում ընդգրկեցին արծանագրվածից կիսով չափ ավելի քիչ:

Հիշեցնենք, որ անցյալ ընտրությունների ժամանակ 15%-անոց քվոտայի պարագայում համամասնական ընտրակարգով խորհրդարան էր անցել 12 կին (9,1%), իսկ մեծամասնականով՝ ոչ մեկը: Եթե հաշվի առնենք, որ այս գումարման 14 կանանցից երկուսն անցել են մեծամասնական ընտրակարգով, ապա ստացվում է, որ ընդհանուր առմամբ կուսակցությունները ոչ մի առաջընթաց չեն արձանագրել: Ավելին՝ արժեզրկել են ընտրական օրենսգրքում ամրագրված 20%-անոց քվոտան, որի կիրառմամբ հասարակությունը կարող էր ակնկալել Ազգային ժողովում կանանց առնվազն նույնքան ներկայացվածություն:

Կանանց աջակցելու նպատակով օրենքով նախատեսված մեխանիզմը ըստ էության չաշխատեց ինչ-ինչ ներկուսակցական նկատառումներով արված տեղափոխումների և ինքնաբացարկների միջոցով, որոնք շատ դեպքերում հանրությանն անհասկանալի մնացին:

Կատարվածն ավելի մանրամասն վերլուծելու առիթ դեռ կունենանք, անդրադառնանք կանանց ներկայացվածության ընդհանուր պատկերին ըստ կուսակցությունների:

«Հայաստանի հանրապետական կուսակցություն» խմբակցության 69 պատգամավորից 9-ը կին են, ինչը 13% է կազմում (նախընտրական ցուցակում 21,3% կին):

«Բարգավաճ Հայաստան» խմբակցության կազմում 37 պատգամավոր է, այդ թվում՝ 2 կին, այսինքն՝ կանայք 5,4% են (նախընտրական ցուցակում՝ 21,8%):

«Հայ ազգային կոնգրես» խմբակցությունում 7 պատգամավոր է և մեկ կին, դա 14% է (նախընտրական ցուցակում 20,3%):

«Օրինաց երկիր» խմբակցության 6 պատգամավորից մեկն է կին, տոկոսային հարաբերակցությամբ 16% է (նախընտրական ցուցակում 20,2%):

«Ժառանգություն» խմբակցության կազմում 5 պատգամավորից մեկը կին է, դա 20% է կազմում (նախընտրական ցուցակում՝ 24,6%):

«Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցության 5 պատգամավորների թվում կին չկա (նախընտրական ցուցակում 32%):

Համեմատելով խմբակցությունների կազմը նախորդ գումարման հետ՝ նկատենք, որ ՀՀԿ խմբակցությունն ակնհայտորեն ավելացրել է կանանց թիվը իր կազմում՝ անցյալ գումարման 3,1 տոկոսից մինչև այսօրվա 13%-ը:

ԲՀԿ-ն հակառակը՝ 12% կանայք ունենալով անցյալ գումարման իր խմբակցությունում, այժմ ընդամենը 5% է ընդգրկել: Ընդ որում, խմբակցության պատգամավորների թիվը 12-ով ավելացել է, իսկ կանանց թիվը՝ պակասել:

Զգալի հետընթաց է նկատվում կանանց ներկայացվածության առումով ՀՅԴ-ի և «Ժառանգության» մոտ, որոնց կազմում անցյալ գումարման ժամանակ ընդգրկվել էին, համապատասխանաբար, 18,7% և 42,8% կին, իսկ այս անգամ՝ 0% և 24,6% կին: «Օրինաց երկիրն» առաջընթաց չի արձանագրել՝ նրա կազմում ինչպես կար, այնպես էլ մնացել է մեկ կին:

Նշենք նաև, որ ԱԺ-ում ներկայացված կանանց կազմը գրեթե 2/3-ով նոր է. 14 կանանցից միայն հինգն են նախորդ գումարման պատգամավոր եղել:

Անցյալն ու ներկան

«Մենք շտապելու խնդիր չունենք», կարող ենք 100 տարի էլ սպասել...

ԱԺ-ում կանանց և տղամարդկանց հավասար ներկայացվածությանը հասնելու համար առնվազն 100 տարի կպահանջվի... Նման եզրակացության կարելի է հանգել՝ վերլուծելով վերջին քսան տարվա ընթացքում հայոց խորհրդարանում կանանց թվի ավելացման տեմպերն ու միտումները, որոնք, ի դեպ, տեղավորվում են քաղաքական այրերի «մենք շտապելու խնդիր չունենք» հայտնի բանաձևի շրջանակներում...

Համեմատության համար հիշենք, որ 1985-ին Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդում կանայք 35,6% էին կազմում:

Անկախացման նախաշեմին Հայաստանի առաջին գումարման Գերագույն խորհրդում, որը կազմավորվեց 1990-ին միայն մեծամասնական ընտրակարգով՝ 260 պատգամավորով, 9 կին էր ներկայացված, այսինքն՝ 3,5%:

Առաջին գումարման Ազգային ժողովում՝ 1995-ին, 12 կին էր ընդգրկված 190 պատգամավորից, այսինքն՝ 6,3%, ընդ որում՝ համամասնականով անցած բոլոր կանայք «Շամիրամի» ընտրացուցակով էին ընտրվել, իսկ մեծամասնական ընտրակարգով 4 կին էր ընտրվել:

Երկրորդ գումարման ժամանակ՝ 1999-ին, կանայք ամենաքիչն էին ընդգրկված՝ ընդամենը չորսը 131 պատգամավորից, ինչը կազմում էր 3%: Ի դեպ, չորսից երկուսը մեծամասնականով էին անցել:

Երրորդ գումարման ԱԺ-ում՝ 2003-ին, ներդրվեց կանանց համար անախադեպ խտրական 5-տոկոսանոց քվոտան, և կանանց թիվը հասավ յոթի՝ 131 պատգամավորից, ինչը կազմեց 5,3%: Մեծամասնականով ընտրվեց միայն մեկ կին:

Նախորդ՝ չորրորդ գումարման ԱԺ կազմում գործի դրվեց 15-տոկոսանոց քվոտան, և 12 կին ընտրվեց, այսինքն՝ 9,1%: Մեծամասնականով ոչ մի կին չէր ընտրվել:

Այս ընտրություններում քվոտան բարձրացվեց մինչև 20 տոկոս: Արդյունքում՝ հինգերորդ գումարման ԱԺ-ում 14 կին պատգամավոր է ընդգրկվել, այսինքն՝ կանայք ընդամենը 10,6% են կազմում, ընդ որում՝ նրանցից երկուսը մեծամասնականով են ընտրվել:

Այսպիսով, 20 տարվա կտրվածքով կանանց թիվը մեր խորհրդարանում աճել է ընդամենը 7%-ով: Հաշվի առնելով կանանց ներկայացվածության այդ դինամիկան՝ կարող ենք ենթադրել, որ այսօրվա 20%-անոց քվոտան իրականություն դարձնելու համար մեզ կպահանջվի ևս 25 տարի...

Հիշեցնենք, որ կանանց ներկայացվածությունը աշխարհի խորհրդարաններում այսօր միջինը 19,5% է, իսկ կանանց մասնակցության ամենացածր տոկոսը արաբական երկրներում է՝ ընդամենը 11,3%...

Փաստաշար

Խորհրդարանի ղեկավար պաշտոններում ընտրվեց երեք կին

Նորընտիր հինգերորդ գումարման Ազգային ժողովի առաջին նիստում, որը մեկնարկեց մայիսի 31-ին, պատգամավորներն ընտրեցին խորհրդարանի նախագահին, փոխնախագահներին և խորհրդարանական 12 մշտական հանձնաժողովների նախագահներին: Նրանց թվում երեք կին ընտրվեց:

ԱԺ փոխնախագահներից մեկը դարձավ ՀՀԿ խմբակցության անդամ, ՀՀԿ կանանց խորհրդի նախագահ **Հերմինե Նաղդալյանը:**

Եվրոպական ինտեգրման հարցերի հանձնաժողովը կգլխավորի **Նաիրա Զոհրաբյանը** ԲՀԿ խմբակցությունից, իսկ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի հանձնաժողովը՝ **Էլինար Վարդանյանը,** նույնպես ԲՀԿ-ից:

ԱԺ վեց խմբակցություններից մեկը կին է գլխավորում՝ **Հեղինե Բիշարյանը՝** «Օրինաց երկիր» կուսակցությունից:

Միասին հաղթահարեցին անցողիկ շեմը

Մեծամասնականով առաջադրված կանայք միասին հաղթահարեցին 5 տոկոսանոց շեմը՝ ստանալով ընտրողների 98.685 քվեն: Իսկ եթե լուրջ, ապա այդ ընտրակարգով պայքարի մեջ մտած 11 կանանցից հաղթողի դերում հայտնվեցին միայն երկուսը՝ թիվ 17 ընտրատարածքում՝ Արտաշատի թիվ 1 դպրոցի տնօրեն, ՀՀԿ անդամ **Կարինե Պողոսյանը** և թիվ 40 ընտրատարածքում՝ «Ինքերնեյշն Մասիս տաբակ» ՍՊԸ գործադիր տնօրեն, անկուսակցական **Մարինե Մարաբյանը:** Նշենք, որ մնացած գրեթե բոլոր կանայք իրենց ընտրատարածքներում երկրորդն էին:

Կանայք ընտրական հանձնաժողովներում

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները 7-ն են, որոնցից 3-ը կանայք են, նրանցից մեկը ԿԸՀ նախագահի տեղակալն է:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում կանանց ներկայացվածությունը կազմում է մոտ 30,5%, ընդ որում, Երևանում՝ 34%, իսկ մարզերում՝ 28%: ԸԸՀ-ների ղեկավարության կազմում կանայք ընդամենը 16% են, նրանցից 3-ը նախագահ են, 8-ը՝ տեղակալ և 9-ը՝ քարտուղար, ընդ որում, 41 ԸԸՀ-ներից 25-ում կանայք ղեկավար պաշտոններում ընդգրկված չեն:

Կանանց ներկայացվածությունը զգալի տոկոս է կազմում հատկապես տեղամասային ընտրական հանձնաժողովներում, որոնցում կանայք 44% են: Դրա հետ մեկտեղ, տեղամասային 1982 հանձնաժողովների մեկ երրորդում նախագահը կին է:

ԸՆՏՐԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑ

Ինչո՞ւ չաշխատեց քվոտայի մեխանիզմը

Մենք հեռու ենք այն մտքից, որ խորհրդարան անցած կուսակցությունները սխալ են ընտրել քվոտայի գախափարը, բայց փաստը մնում է փաստ՝ նրանք չեն ապահովել կանանց 20 տոկոսանոց ներկայացվություն դե ֆակտո Ազգային ժողովի կազմում, բայց գերազանցել են քվոտայի ցուցանիշը ինքնաբացարկների թվով: ԿԸՀ տվյալներով՝ տարբեր կուսակցություններից ինքնաբացարկի դիմում էին ներկայացրել ընդհանուր առմամբ 102 պատգամավորի թեկնածու, որոնցից 26-ը կին էին, այսինքն՝ գրեթե 25 տոկոսը: Ի դեպ, կարող էր ավելի շատ լինել, ուղղակի ավելի կին չկար անցողիկ տեղերում, որ հրաժարական տային:

Որո՞նք են մանդատից հրաժարվելու հիմնական պատճառները: Պարզվում է՝ դրանք խիստ տարբերվում են ոչ միայն ըստ կուսակցությունների, այլ նաև կանանց և տղամարդկանց կտրվածքով:

Ինքնաբացարկների հիմնական մասը գործադիր իշխանության մեջ ներգրավված պաշտոնյաներն են արել: Սակայն եթե տղամարդկանց դեպքում նման պատճառաբանությամբ պատգամավորի մանդատից հրաժարվողների թիվը գրեթե 80 տոկոսի է հասնում, ապա կանանց պարագայում պատկերը հակառակն է:

Ինքնաբացարկի դիմող կանանց թվում թեև կան գործադիրում կամ որևէ բնագավառում բարձր պաշտոն զբաղեցնող կանայք, բայց նրանք ընդամենը 30 տոկոսն են: Մյուսների դեպքում պատգամավոր դառնալու մտադրությունից հետ կանգնելու պատճառները լայն հասարակության համար անհայտ են, քանի որ այդ քայլին դիմող կանայք կտրականապես հրաժարվում են ինչ-որ բան բացատրել լրագրողներին:

Այստեղից միայն մեկ եզրակացության կարելի է հանգել. եթե անձը չի կարողանում համոզիչ հիմնավորել իր որոշումը, նշանակում է՝ այդ որոշումն ընդունել են առանց իրեն հարցնելու… Իսկ եթե կուսակցությունն է նման որոշում կայացնում՝ համարելով, որ այդ կանայք արժանի չեն պատգամավոր դառնալու, ապա հարց է ծագում. ինչո՞ւ են նրանց ընդհանրապես ցուցակներում ընդգրկում … էլ չենք ասում՝ ինչո՞ւ են այդ կանայք համաձայնում հրաժարական տալու հեռանկարով մտնել ցուցակի մեջ…

Շատ դեպքերում նույնիսկ տրամաբանորեն չի հաջողվում կռահել պատգամավորությունից հրաժարվելու իրական պատճառը, համենայն դեպս, հենց նման տպավորություն ենք ստացել ինքնաբացարկի դիմում ներկայացրած կանանց ցուցակները դիտարկելուց հետո…

Այսպես, ՀՀԿ համամասնական ցուցակից ինքնաբացարկի դիմում են ներկայացրել 69 թեկնածու, այդ թվում՝ 14 կին, որոնք ընդգրկված էին 6-106-րդ տեղերում: Միակ հստակ եզրահանգումը, որ կարելի է անել այս ցուցակի ուսումնասիրությունից, այն է, որ նախարարի կամ փոխնախարարի պորտֆելը ու գուցե ևս մի երկու-երեք բարձր պաշտոններ իրոք կարող են ծանրակշիռ փաստարկ լինել պատգամավոր դառնալու հեռանկարից հրաժարվելու համար: Սակայն ցուցակում ընդգրկված անձանց առնվազն կեսի դեպքում մանդատից հրաժարվելու դրդապատճառները տրամաբանական բացատրության չեն ենթարկվում:

Դիտարկենք մեկ այլ օրինակ. ԲՀԿ համամասնական ցուցակով ինքնաբացարկ են ներկայացրել 28 թեկնածու, այդ թվում՝ 10 կին, ովքեր ներկայացված էին 16-61-րդ տեղերում: Այս ցուցակում ընդգրկված գրեթե բոլոր կանանց համար անհնար է մանդատից հրաժարվելու տրամաբանական պատասխան գտնել…

Նույնքան անհասկանալի էր նաև ՀՅԴ կայացրած որոշումը, ըստ որի՝ մանդատից հրաժարվեցին 3-րդ համարը զբաղեցնող Արտյուշա Շահբազյանը և 6-րդ համարում՝ ՀՀ կրթության ազգային ինստիտուտի հասարակագիտության մասնագետ Կարինե Հարությունյանը: Եվ դա այն դեպքում, երբ իր համամասնական ցուցակում 32 տոկոս կանանց ներկայություն ապահոված Դաշնակցությունը խորհրդարան մտավ միայն տղամարդկանցից բաղկացած թիմով…

Մի խոսքով, ինքնաբացարկների այս թեկուզ և մակերեսային վերլուծությունը որոշակի չափով ցույց է տալիս՝ ինչո՞ւ ընտրական օրենսգրքում ներդրված քվոտային մեխանիզմը հերթական անգամ չաշխատեց մեզանում…

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿԱՐԾԻՔ

Միջազգային դիտորդները կանանց մասնակցության մասին

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության ղեկավար Ռադմիլա Շեկիրինսկան ընտրություններից անմիջապես հետո միջանկյալ զեկույցը ներկայացնելիս դրական գնահատեց կանանց ներկայացվածությունը կուսակցությունների նախընտրական ցուցակներում:

«Հատկանշական է, որ նոր ընտրական օրենսգրքում քաղաքական գործընթացներին կանանց մասնակցության համար նոր ծավալի քվոտաներ էին նախատեսվել: Նկատելի և ողջունելի են քվոտայի դերակատարումն ու կիրառումը, սակայն այս առումով մտավախություն կա: Կանայք, ովքեր ընդգրկվում են կուսակցությունների ցուցակներում, ընտրվելուց հետո ինքնաբացարկ են հայտարարում: Այս պարագայում քվոտայի նշանակության իմաստը կորչում է»,- ասաց Շեկիրինսկան:

Բանախոսը նաև նկատեց, որ տեղամասային ընտրական հանձնաժողովներում նախագահների 32%-ը, իսկ անդամների 44%-ը կանայք են եղել:

«Սա նշանակում է, որ գենդերային քվոտան ընտրությունների կազմակերպման հարցում պահպանված է եղել: Կանանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները նույնպես շատ ակտիվ են եղել ընտրատեղամասերում, տեղական դիտորդների մի ստվար զանգվածը կանայք էին, ինչը ողջունելի է»,- եզրափակեց Շեկիրինսկան:

«Կանանցից ավելի շատ օգուտ կլինի, քան հորանջող պատգամավորներից»

«Մեծամասնականով երկու կանանց հաղթանակը մեծ ձեռքբերում է»,- այսպիսի կարծիք հայտնեց «Սոցիոմետր» սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնի ղեկավար Ահարոն Ադիբեկյանը մեզ հետ զրույցում՝ վերլուծելով ընտրություններին կանանց մասնակցության արդյունքները:

Նախկինում մենք գիտեինք միայն Հրանուշ Հակոբյանին, որը միշտ կարողանում էր հաղթահարել մեծամասնականի պատնեշը: Այս անգամ մեծամասնականով խորհրդարան անցած կանայք փայլուն հաղթանակ տարան՝ ստանալով 70 և բարձր տոկոս ձայներ: Սա լուրջ հաջողություն է: Մյուս ընտրատարածքներում էլ կանայք բավականին բարձր վարկանիշ ունեցան: Հեղինե Բիշարյանը և Վիոլետ Պետրոսյանը ստացան ձայների 1/3-ը, ուղղակի նրանց դեմ առաջադրվել էին օլիգարխներ, որոնց կազմակերպչական ու նյութական կարողություններն ավելի բարձր են եղել: Կանանց մյուս խումբը ստացավ ձայների 1/5-ը, օրինակ՝ Զարուհի Փոստանջյանն իր ընտրատարածքում ստացավ 20% ձայն, այն դեպում, երբ ՀՀՇ նախագահ Արամ Մանուկյանը ստացավ ընդամենը 16,7%: Սաթիկ Սեյրանյանը ստացավ 11%, Գայանե Առուստամյանը՝ 15%, Անահիտ Բախշյանը՝ 12,7% տոկոս: Սրանք բավականին լավ ցուցանիշներ են: Մենք տեսնում ենք, որ շատերը երկրորդն էին և ոչ թե երրորդը կամ չորրորդը, այսինքն՝ եթե բարենպաստ պայմաններ լինեն, նրանք հաղթելու հնարավորությունը միշտ ունեն: Էլ չենք ասում, որ մեծամասնական ընտրակարգով առաջադրված կուսակցական կանայք իրենց կուսակցություններին զգալի չափով ձայներ էին բերել:

Դրա հետ մեկտեղ սոցիոլոգը լուրջ բացթողում որակեց մեծամասնականով միևնույն ընտրատարածքում մեկից ավելի կին թեկնածուների առաջադրումը:

- Այս դեպքում կանանց ընտրվելու շանսերը բաժանվեցին: Բացի այդ, մեծամասնականով առաջադրված կանայք հաղթելու համար պետք է տվյալ համայնքում լուրջ նախապատրաստական աշխատանք տանեին: Մարինե Մարաբյանը հաղթեց, որովհետև իրեն սատարող ընկերությունը այնտեղ շատ աշխատանք էր տարել դեռ նախորդ ընտրություններից սկսած՝ սոցիալական, գործազրկության հետ կապված, և ընտրողներին հավաստիացրել էին, որ նրան ընտրելով էլ այդպես կշարունակվի:

Բոլոր դեպքերում, Ադիբեկյանի համոզմամբ, պետք է օրենսդրորեն ապահովել կանանց ներկայացվածության ավելի բարձր մակարդակ.

- Պետք է այնպես անել, որ համամասնական ցուցակների առաջին տասնյակում գոնե երկու կին թեկնածու լինի, և կանայք խորհրդարանում ներկայացված լինեն գոնե 25-30%-ով: Կանայք ավելի աշխատունակ են, ավելի կարգապահ, նրանցից ավելի շատ օգուտ կլինի, քան այդ հորանջող պատգամավորներից, որ ընտրվում են միայն կեղծ հեղինակություն ունենալու համար: Այս առումով օրենքը պետք է աջակցի կանանց…

Մարիաննա Ղահրամանյան

ՔԱՐՈԶԱՐՇԱՎ

Կարգախոսված էր, ինչպե՞ս կարվի

Հետաքրքրական մոտեցումներ արձանագրվեցին մեծամասնական ընտրակարգով առաջադրված կին թեկնածուների կարգախոսներում:

Պատգամավորության թեկնածու՝ «168 ժամ» օրաթերթի խմբագիր Սաթիկ Սեյրանյանը կոչ էր անում. **«Միասին խմբագրենք Ազգային ժողովը»:** Նույն՝ թիվ 4 ընտրատարածքում առաջադրված մյուս կին թեկնածուն՝ Զարուհի Փոստանջյանը, ինչպես և իր ներկայացրած կուսակցությունը՝ «Ժառանգությունը», հայտարարում էր իր գալստյան մասին՝ ասելով. **«Գալիս եմ արդարության համար»:** Նշյալ թեկնածուներից մեկը փաստորեն կոչ էր անում, մյուսը՝ տեղեկացնում: Ըստ էության, առաջինում համատեղ ուժերով աշխատելու պատրաստակամ առաջարկության տարր կա, երկրորդում՝ սեփական ջանքերը ներդնելով՝ հովանի հանդիսանալու պատրաստակամ վստահության տարր:

Պակաս հետաքրքրակա ն չէր կրկին «Ժառանգությունից» Աժ պատգամավոր Անահիտ Բախշյանի և այս անգամ «Չորրորդ ինքնիշխանություն» թերթի լրագրող Գոհար Վեզիրյանի կարգախոսների բախումը թիվ 12 ընտրատարածքում: Եթե մանկավարժական երկարամյա արդյունավետ աշխատանքային փորձ ունեցող Բախշյանը, օգտվելով հարազատ կուսակցության կարգախոսից, ճշգրտում էր՝ **«Գալիս եմ որակյալ կրթության համար»,** ապա լրագրող Վեզիրյանը, հիմնվելով լրագրողական աշխատանքում սեփական սկզբունքի վրա, վճռականորեն պնդում էր. **«Պարտադրի՛ր քո կամքը՝ իշխանությունը դու ես»:** Թեև նույն ընտրատարածքում թեկնածություն առաջադրած կանանց կարգախոսների հենքը մասնագիտական փորձառությունն էր և բխում էր հասարակության համար կյանքի այլ որակ ապահովելու նպատակից, այնուամենայնիվ, առանցքային տարբերություն ուներ. առաջինում տեղեկացում էր, երկրորդում՝ կոչ, որում գերակշիռը պարտադրանքն էր:

«Ինքերնեյշնլ Մասիս տաբակ» ընկերության տնօրեն Մարինե Մարաբյանը, առաջադրվելով թիվ 4 ընտրատարածքում, մտադիր է արմատական փոփոխություն նախաձեռնել: Թեկնածուի կարգախոսն էր՝ **«Աշխատանք և արժանապատիվ կյանք»,** որի բովանդակությունը գոնե խոսքի մակարդակում կարևորելն արդեն ավանդաբար մի նախընտրական փուլից մյուսն է փոխանցվում:

Գլոբալ փոփոխությունը նպատակ արած մի թեկնածու էլ՝ ՕԵԿ-ի փոխնախագահ Հեղինե Բիշարյանը, որ խորհրդարանում ներկա լինելու համար պայքարում էր թիվ 11 ընտրատարածքում, օրենքի Հայաստան էր ուզում կառուցել, ինչի համար դիմում էր ընտրողին. **«Վստահի՛ր, որ կառուցենք օրենքի Հայաստան»:**

Թիվ 32 ընտրատարածքում առաջադրված Օֆելյա Վահանյանի կարգախոսն էլ մաղթանք էր հիշեցնում. **«Ապրենք արժանապատիվ»:** Ու քանի որ անգամ մեծագույն, անհաղթահարելի ցանկության դեպքում անհնար կլինի, որ արթնանք ու հենց վաղվանից այլևս սկսենք արժանապատիվ ապրել, ՀՀԿ-ն մտածել, ելքը գտել ու, այն կարգախոս արած, ասում էր. **«Հավատանք, որ փոխենք»:** Ասվածից տարբեր չէ, նույնական է ՀՀԿ առաջադրմամբ թիվ 17 ընտրատարածքում հանդես եկող Կարինե Պողոսյանի կարգախոսը:

«Փոխվեք, որ հավատանք»: Չէ՛, սա էլ բառախաղ չէ, կարգախոս էր, որ տեղին ու շատ արդիական էր համարել թիվ 38 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով ինքնաառաջադրված Նարինե Մովսիսյանը և ըստ ամենայնի ոչ միայն նա: Վիոլետա Պետրոսյանը, որ առաջադրվել է թիվ 13 ընտրատարածքում, ՀԱԿ-ի **«Ոչ մի ձայն հանցավոր ռեժիմին»** կարգախոսին է տեր, բայց անհատապես հոգեհարազատ է համարում և որպես անհատական մոտեցում կարևորում է **«Հայաստան անունով մեր տունը կառուցենք»** կոչը, որի իրագործմանը նպաստել է «Հայաստան» համահայկական հիմնադրամում աշխատելով: Մնում էր հուսալ, որ հետագա աշխատանքի ընթացքում երկու կարգախոսից կընտրվեր կառուցողականը:

Թիվ 1 ընտրատարածքում ինքնաառաջադրմամբ պատգամավորական աշխատանք իրականացնելու իր ցանկությունն էր հայտնել լրագրող Գայանե Առուստամյանը, որի **«Քվեարկի՛ր, որ չպարտվես»** կարգախոսը, ըստ էության, ՀԱԿ-ի կարգախոսի ավելի մեղմ ու ընդհանրական վերաձևակերպումն էր:

Նանա Պետրոսյան

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ

Երեք հարց կանանց կազմակերպություններին

Դժվար է թերագնահատել կանանց հասարակական կազմակերպությունների դերը ընտրական օրենսգրքում գենդերային քվոտայի բարձրացման հարցում: Իհարկե, օրենսգրքի փոփոխության ժամանակ արված նրանց ոչ բոլոր առաջարկներն ընդունվեցին, բայց ընտրությունների փորձը ցույց տվեց, որ օրենքը չաշխատեց հատկապես այն մասով, որը շեշտադրված էր ՀԿ-ների կողմից դեռևս քննարկումների ժամանակ: Այս իմաստով մեր զրուցակից՝ կանանց ՀԿ-ների ղեկավարներին դե ֆակտո ստացված արդյունքն անակնկալի չբերեց, ուղղակի ևս մեկ անգամ հասկանալի դարձավ, որ պետք է շարունակել աշխատել օրենքի բացը լրացնելու ուղղությամբ: Մեր հետընտրական զրույցները նրանց հետ ծավալվեցին երեք հարցադրման շուրջ.

- Ինչո՞վ էր տարբերվում կանանց մասնակցությունը և նրանց վարած քարոզարշավը այս ընտրություններում:

- Ինչպիսի՞ն էր կանանց ՀԿ-ների համագործակցությունը առաջադրված կանանց հետ:

- Ինչպե՞ս եք գնահատում այն փաստը, որ ԱԺ նոր կազմում կանայք ընդամենը 10 տոկոս են:

«Երաշխիքներ են անհրաժեշտ...»

- Միայն վերապահումով կարելի է խոսել քարոզարշավում կանանց մասնակցության մասին, իրականում կանայք չդարձան քարոզարշավի ակտիվ մասնակիցներ: Եվ դա այն պարագայում, երբ կանայք կուսակցություններում զգալի ներուժ են ներկայացնում: Հատկապես առաջատար կուսակցությունների՝ Հայաստանի հանրապետական կուսակցության և «Բարգավաճ Հայաստանի» քարոզարշավներն ընթացան հիմնականում առաջնորդների մակարդակով, դրանց լիարժեք չմասնակցեցին ոչ միայն կուսակցության անդամ կանայք, այլև տղամարդիկ: Իրականում դա վկայում է, որ ներկուսակցական ժողովրդավարությունը մեզանում դեռևս լիարժեք չի ձևավորվել:

Թեև Ազգային ժողովի նախորդ՝ 4-րդ գումարման համեմատությամբ չնչին առաջընթաց է գրանցվել կանանց ներկայացվածության հարցում, և այսօր արդեն ԱԺ փոխխոսնակ և երկու մշտական հանձնաժողովների նախագահ են ընտրվել կանայք, այդուհանդերձ, պետք է արձանագրենք, որ նորընտիր խորհրդարանում կանանց ներկայացվածությունը երկու անգամ ցածր է համաշխարհային ցուցանիշից:

Խիստ քննադատելի է, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության խմբակցությունում, որը Ազգային ժողովում մեծությամբ երկրորդն է, 37 մանդատներից միայն երկուսը բաժին հասան կանանց, այսինքն՝ կանայք կազմում են այս խմբակցության ընդամենը 5,1%-ը, թեպետ կուսակցության համամասնական ցուցակում նրանց ներկայացվածությունը ընտրական օրենսգրքով նախատեսված սահմաններում էր:

Կարծում ենք՝ բարոյական չէ, երբ կանայք թույլ են տալիս օգտագործել իրենց անունը՝ համաձայնելով ընդգրկվել կուսակցությունների ընտրացուցակներում, և այնուհետև հեշտությամբ հրաժարվում են, դրանով իսկ խոչընդոտելով այլ՝ սկզբունքային կանանց մուտքը օրենսդիր մարմին:

Ստեղծված իրավիճակն ավելի է ամրապնդում մեր խորին համոզմունքը, որ իրավացի էին այն բազմաթիվ ՀԿ-ները, որոնք առաջարկում էին ընտրական օրենսգրքում նախատեսել դրույթ, ըստ որի ընտրացուցակից կնոջ թեկնածությունը հանելու կամ պատգամավորի մանդատից կնոջ հրաժարվելու դեպքում նրա տեղը պետք է զբաղեցնի ցուցակում ընդգրկված հաջորդ կինը: Դա երաշխիք կլիներ, որ կանանց ներկայացվածության խնդիրը քաղաքական դաշտից չտեղափոխվեր կամայականության դաշտ և պայմանավորված չլիներ առանձին կուսակցությունների տղամարդ ղեկավարների քմահաճույքով...

Զեմմա Հասրաթյան,
Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ

«Քվոտան որ չլիներ...»

- Ես չեմ էլ ակնկալել, որ ԱԺ-ում 20% կանանց ներկայություն կապահովեն, քանի որ նախքան ընտրությունները «Կին առաջնորդների ֆորումի» առաջարկությունը՝ քվոտան ամրագրել «ըստ արդյունքի», մերժվել էր: Կարծում եմ՝ առաջիկայում օրենսդրական բացի ուղղությամբ պետք է աշխատել, այն է՝ քվոտան սահմանող հոդվածում պետք է հստակ նշվի, որ արդյունքում, այսինքն՝ մանդատ ստացողների մեջ 20% կին պետք է ապահովել, ոչ թե ընտրացուցակներում...

Երկրորդ պատճառը, որ ընդամենը 10% կին ունեցանք, կուսակցություններում քաղաքական կամքի պակասն էր, և երրորդն էլ՝ այն չափանիշները, որոնք գործում են ցուցակում ընդգրկվելու համար: Դրանք պետք է փոխվեն: Այսինքն՝ եթե ցուցակում ընդգրկվելու չափանիշը ոչ թե մարդու արժանիքներն են, այլ փողը, ունեցվածքը, դիրքը, ապա կանանց համար դժվար թե տեղ գտնվի: Քանի որ մենք օլիգարխ կանանց խավ չունենք, կանանց շատ դեպքերում պարտադրված են ընդգրկում՝ քվոտայով: Հնարավոր է՝ քվոտա չլիներ, ընդհանրապես ոչ մի կին չընդգրկվեր: Մեծամասնականով դա շատ պարզ երևաց, որ կանայք հիմականում պարտվեցին «փողատերերին»:

Առաջադրված կանանց հետ համագործակցության մասին ասեմ, որ «Կին առաջնորդների ֆորումը» նախաձեռնություն էր ցուցաբերել դեբատների մշակույթը Հայաստանում ձևավորելու ուղղությամբ՝ «Բանավիճում են միայն կանայք» հանդիպում կազմակերպելով կին թեկնածուների հետ: Փորձեցինք պարզել՝ որքանո՞վ են նրանք պատրաստված, ինչպե՞ս են պատկերացնում իրենց աշխատանքը Ազգային ժողովում: Մեզ համար կարևոր էր, որ դեբատների մշակույթը մտավ, ու լավ կլինի, որ շարունակվի...

Լսել եմ՝ մեծամասնականով առաջադրված որոշ կանայք դժգոհել էին, որ կանանց ՀԿ-ները իբր նրանց չեն աջակցել: Բայց նրանք պետք է տեղյակ լինեին, որ, ըստ օրենքի, ՀԿ-ն իր գործառույթներով չի կարող զբաղվել քաղաքականությամբ: Ընտրություններին շատ ՀԿ-ներ, այդ թվում կանանց, մասնակցել են՝ ներկայացնելով անկախ դիտորդներ: ՀԿ-ների շատ անդամներ վստահված անձ են եղել, բայց նման համագործակցությունը երկուստեք քայլերի արդյունքում է կայանում, այսինքն՝ թեկնածուն ինքն ինչ-որ քայլեր է անում կանանց ՀԿ-ների ռեսուրսը ներգրավելու առումով...

Դուստրիկ Մխիթարյան,
«Կին առաջնորդների ֆորումի» համակարգող խորհրդի նախագահ

Հ.Գ. Ինչպես արդեն տեղեկացրել էինք, Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցը (ՔՀՀՑ), որը միավորում է ՕՔՍՖԱՄ-ի գործընկեր շուրջ 29 ՀԿ-ներ, ընտրություններից անմիջապես առաջ ստորագրահավաք էր կազմակերպել և նամակ-դիմումներ ուղարկել բոլոր կուսակցություններին՝ փորձելով նախօրոք կանխել ցուցակներում ընդգրկված կանանց հրաժարումը մանդատներից: Ի դեպ, դիմումում կուսակցություններին առաջարկվում էր նաև առաջնորդվել գենդերային արդարության սկզբունքով՝ հնարավորություն ընձեռելով, որ մանդատից հրաժարվող կնոջ տեղը զբաղեցնի ցուցակում ընդգրկված հաջորդ կինը:

Նախաձեռնության կազմակերպիչների կարծիքները կարդացեք առաջիկա համարում...

Լիլիթ Քոչինյան
Նինել Հովհաննիսյան

«Արդյունքն ինձ համար անակնկալ չէր»

- Կանայք, ընդհանուր առմամբ, շատ քիչ երևացին ընտրարշավի ընթացքում: Երկու-երեք կուսակցություններ միայն լիդերներով հանդես եկան քարոզարշավին: Համամասնական ցուցակներում ընդգրկված նոր կանանց մենք փաստորեն այդպես էլ չճանաչեցինք, տեսադաշտում ավելի շատ պատգամավոր կանայք էին, որոնց գիտեինք...

Գիտակցված ընտրություն կատարելու համար շատ կարևոր է, որ բնակչությունը տեսնի ու ճանաչի՝ ո՛ւմ է ընտրում և ինչի՛ համար: Անցյալ ընտրությունների ընթացքում մենք դեբատներ էինք կազմակերպել հենց այդ նպատակով՝ նոր կանանց ճանաչելու համար, շատ եմ ափսոսում, որ այս անգամ դա չարեցինք, չքննարկեցինք նրանց ծրագրերը: Բայց ընտրական գործընթացին մասնակցել ենք որպես դիտորդ:

Արդյունքը, որ ունեցանք ԱԺ-ում կանանց ներկայացվածության առումով, ինձ համար ամենևին էլ անակնկալ չէր: Այդքան տարվա մեր պայքարից հետո վերջապես կարողացանք համոզել, որ քվոտան անհրաժեշտ է, ընդունեցին, բայց կրկին արեցին նույնը, ինչ միշտ: Ընտրական օրենսգրքի քննարկումների ժամանակ առաջարկեցի, որ ինքնաբացարկներից հետո Կենտրոնական ընտրական հանձնաժողովը չհաստատի այն ցուցակները, որտեղ 20 տոկոս կին չկա: Հիշում եմ՝ ԱԺ պետահիրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյանն ասաց, որ դա հնարավոր չէ... Այդ պատասխանից հետո այլևս ակնկալիք չունեի...

Միդա Թոփուզյան, *Կանանց հանրապետական խորհրդի նախագահ*

«Անտեսեցին կայացած ակտիվ կին պատգամավորներին»

- Այս ընտրությունները կարելի է համարել ամենահանդարտը այն իմաստով, որ բոլոր կուսակցությունները վարում էին հավասարակշռված ու հանդուրժողական նախընտրական կամպանիա: Ուրիշ հարց, որ շատ քիչ մարդիկ էին ներգրավված բուն քարոզարշավում: Բոլոր կուսակցությունները կարծես թե հանդես էին գալիս միայն իրենց առաջնորդներով, և ցուցակներում ներկայացված մյուս թեկնածուները գրեթե անտեսանելի էին:

Հատկանշական էր, որ չնայած, հետևելով օրենքին, կուսակցական ցուցակներում պահպանվել էր կանանց թվի համաչափությունը, սակայն դրա հետ մեկտեղ ակտիվ պատգամավորական գործունեություն ծավալած կանայք էին հետ մղված, անտեսված: Օրինակ՝ «Ժառանգություն» կուսակցությունը, որը ճանաչելի դարձավ ոչ միայն իր առաջնորդով, այլև իր ամենաակտիվ կին պատգամավորներով, անտեսեց Անահիտ Բախշյանին, Դաշնակցությունը նույն կերպ վարվեց Լիլիթ Գալստյանի հետ...

Ինձ թվում է՝ չի կարելի անտեսել կայացած ակտիվ պատգամավորներին, ովքեր արդեն որոշակի փորձ են կուտակել, այդ թվում՝ միջազգային կառույցներում աշխատելու, նվիրյալ են, նման կանայք խորհրդարանում մեզ պետք են: Հիմա նորերը կգան, գուցե ոչ պակաս նվիրյալներ, բայց նրանց կայանալու համար ժամանակ կպահանջվի: Բոլոր դեպքերում ունեցած փորձը մերժել պետք չէր: Եղածի վրա գումարելու փոխարեն՝ փոխանակում ենք կատարում, որը միշտ չէ, որ դրական հետևանքներ է ունենում:

Թե առաջադրված կանանց ՀԿ-ների հետ համագործակցությունն ի՛նչ չափով աջակցեց ընտրական գործընթացներին՝ դժվարանում եմ գնահատել: Գյումրում Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի մասնաճյուղը երկու կլոր սեղան էր կազմակերպել և տարբեր ՀԿ-ներ հրավիրել՝ հանդիպելու կուսակցական ցուցակներում ներկայացված կանանց հետ, ովքեր բնակվում, աշխատում էին Շիրակի մարզում: Սակայն նրանք ցուցակներում այնքան հեռու տեղերում էին ներկայացված, որ ո՛չ մենք և ո՛չ էլ նրանք հույս չունեին, որ կանցնեն: Հանդիպումը պարզապես միմյանց ճանաչելու հնարավորություն էր...

Ելենա Վարդանյան, *Հանրային խորհրդի ժողովրդագրական և գենդերային հարցերի հանձնաժողովի նախագահ*

«Այս անգամ ավելի ակտիվ ու պատրաստված էին»

- Համեմատած նախորդ տարիներին՝ մեծամասնականով առաջադրված կանայք ակնհայտորեն ավելի ակտիվ էին: Նրանց վարած PR-կամպանիաներն էլ, ըստ իս, ավելի պատրաստված էին: Կարող եմ առանձնացնել հատկապես Սաթիկ Սեյրանյանի քարոզարշավը, հատկապես այն, որ նա օգտագործել էր նաև սոցիալական ցանցը՝ «Ֆեյսբուքը», ինչը նոր տեխնոլոգիա եմ համարում այս դաշտում:

Մեր կենտրոնը հատուկ հանդիպումներ էր նախաձեռնել կուսակցական ցուցակներում ընդգրկված կանանց հետ, որտեղ նրանք հիմնականում ներկայացնում էին իրենց կուսակցությունների ծրագրերը: Հանդիպումները ցույց տվեցին, որ կանայք հիմնականում շատ պատրաստված էին և բավական քաջատեղյակ գենդերային հիմնախնդիրներին: Ցավոք, սակայն, մեր հյուրերից շատերը չանցան Ազգային ժողով:

Կուսակցությունները, ի դեպ, շատ բաց էին ՀԿ-ների համար և պատրաստակամ... Սակայն, համագործակցություն՝ որպես այդպիսին, չկար: ՀԿ-ն միայն որպես ամբիոն էր հանդիսանում՝ դեբատներ կազմակերպելու, խոսելու, ներկայացնելու իրենց կարծիքը, ծրագիրը: Լավ կլիներ, որ իրական համագործակցություն կայանար և շարունակական բնույթ կրեր, այլ ոչ միայն ընտրությունից ընտրություն:

Գոհար Շահնազարյան,
«Կանանց ռեսուրսային կենտրոնի» համահիմնադիր

Խորհրդարանի նոր դեմքերը

Այս և առաջիկա համարներում ներկայացնում ենք Ազգային ժողովի նոր կին պատգամավորներին: Հարցազրույցներն ամբողջությամբ կարդացե՛ք WomenNet.am կայքում, որտեղ նաև կարող եք հարցեր ուղղել նրանց:

Նաիրա Կարապետյան. «Կանանց իրավունքների մասին առաջին բարձրաձայնողներից մեկը ես կլինեմ»

Միացյալ ազատական ազգային կուսակցության (ՄԻԱԿ) անդամ Նաիրա Կարապետյանը պատգամավոր է դարձել Հայաստանի հանրապետական կուսակցության համամասնական ցուցակով: Կրթությամբ դիվանագետ է, ավարտել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետը, այնուհետև քաղաքական հմտությունների զարգացման ուղղությամբ սովորել Մեծ Բրիտանիայում և Գերմանիայում, կուսակցությունում զբաղեցնում է արտաքին և հանրային կապերի գծով քարտուղարի պաշտոնը:

- Երբևիցե զգացե՞լ եք գենդերային անհավասարության և հասցեագրված խտրականության դրսևորումներ Ձեր նկատմամբ:

- Իմ նկատմամբ խտրականություն երբեք չեմ զգացել, այս առումով երևի թե ընտրել եմ «ճիշտ» կուսակցություն… ամեն դեպքում նշված դրսևորումները, կարելի է ասել, իմ կողքով են անցել: Ես անգամ համոզված եմ, որ Հայաստանի քաղաքական դաշտում կնոջ հանդեպ խտրականությունն անհնար է՝ որքան էլ բարձր հնչի դա, բայց հայերը, իրոք, կնամեծար են:

Մեր խնդիրն իրականում այն է, որ կանայք շատ դեպքերում չեն ցանկանում զբաղվել քաղաքականությամբ: Եվ ոչ թե նրանց թույլ չեն տալիս դա անել, այլ նրանք պարզապես նման ցանկություն չեն արտահայտում: Ի դեպ, ՄԻԱԿ-ն իր գործունեության ընթացքում նաև այդ խնդրին է անդրադարձել՝ փորձելով երիտասարդ կանանց մեջ հասարակական և քաղաքական գործընթացներին մասնակից լինելու հետաքրքրություն արթնացնել:

- Մտադի՞ր եք անդրադառնալ կանանց խնդիրներին ԱԺ-ում:

- Իմ ողջ գործունեության ընթացքում՝ լինի հասարակական թե քաղաքական դաշտում, ես միշտ էլ եղել եմ կանանց ակտիվ մասնակցության ջատագովը: Քանի որ Ազգային ժողովում նոր եմ, ու ժամանակ է պետք՝ հասկանալու, թե ո՞ր մշտական հանձնաժողովում եմ ներկայացված լինելու ու կոնկրետ ո՞ր ոլորտում եմ կարող առավել ակտիվ դրսևորվել, հիմա դժվարանում եմ ուրվագծել գալիք գործունեության կոնկրետ ուղղությունները: Բայց հավատացնում եմ, որ յուրաքանչյուր տեղ, որտեղ կտեսնեմ կանանց իրավունքների ոտնահարման դեպքեր, առաջին բարձրաձայնողներից մեկը ես կլինեմ:

Մարգարիտ Եսայան. «Կինը զգում է այն, ինչ դեռ չկա, բայց կարող է լինել»...

«Այժմ արդեն ոչ թե վազել նորությունների ետևից, այլ մասնակցել դրանց ստեղծման գործին»,- այսպես է բացատրում լրագրությունից քաղաքական դաշտ իր անցումը Ազգային ժողովի նորընտիր պատգամավոր, ՀՀԿ անդամ, լրագրող Մարգարիտ Եսայանը:

- Իրականում լրագրողները գիտեն ամեն ինչ կամ գրեթե ամեն ինչ, ճանաչում են բոլորին կամ գրեթե բոլորին, գիտեն քաղաքական գործիչների ուժեղ և թույլ կողմերը, գիտեն, թե ինչպես և որտեղ են կայացվում որոշումները… Լրագրողները շատ բան գիտեն, և առաջին հերթին նաև լրագրողների շնորհիվ է կայանում քաղաքական դաշտը: Հուսամ, հասկանալի է, որ խոսքը իրական, պրոֆեսիոնալ լրագրողների մասին է: Ամբողջ աշխարհում կա այս միտումը, երբ երկարամյա փորձ ունեցող լրագրողները որոշում են նորություններ լուսաբանողից, նորություններ հայթայթողից դառնալ «նյուսմեյքեր», այսինքն՝ այդ նորությունների ստեղծողը: Նույնը կատարվեց ինձ հետ: Ես լրագրող եմ աշխատում արդեն շատ երկար, և իմ կյանքում եկավ մի պահ, երբ որոշեցի քաղաքականություն լուսաբանողից դառնալ այդ քաղաքականության մասնակիցը, ինչու ոչ՝ նաև ստեղծողներից մեկը: Եվ պարզապես ուրախ եմ, որ ինձ տրվեց այդ հնարավորությունը:

- Ձեր կարծիքով՝ կանայք պե՞տք է իրենց ոճն ունենան քաղաքականության մեջ, տարբերվո՞ւմ է այն տղամարդկանց ոճից:

- Կանայք սովորաբար ավելի իմպուլսիվ են, տղամարդիկ՝ ավելի «ծանրաշարժ», դա երևում է նաև քաղաքականության մեջ, համոզված եմ, նկատել եք, որ կանայք շատ ավելի բարձր են խոսում, երբ փորձում են ելույթ ունենալ, շատ ավելի ակտիվ շարժուձևով, երբ որևէ միջադեպ է տեղի ունենում հասարակական-քաղաքական միջոցառումների ժամանակ, կանանց ձայնը շատ ավելի բարձր է հնչում, և հիմնական իրարանցումը հենց կանայք են ստեղծում: Գուցե սա բնական է: Իսկ կինը, այո՛, պետք է իր ոճն ունենա: Կինն ունի մի կարևոր հատկանիշ, որը չունեն աշխարհի բոլոր տղամարդիկ միասին վերցրած. նա

զգում է այն, ինչ դեռ չկա, բայց կարող է լինել, քանի որ կինը կյանք է ծնում: Ուստի կանացի ոճը տղամարդկանց պետք է դաստիարակի և զգաստացնի:

Էլինար Վարդանյան. «Որքանո՞վ է այսօր ինքը՝ կինը, պատրաստ եւ ուզում մասնակցել քաղաքական կյանքին»

Էլինար Վարդանյանը մասնագիտությամբ իրավաբան է, խորհրդարան է անցել ԲՀԿ համամասնական ցուցակով և ընտրվել Աժ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի հանձնաժողովի նախագահ: Քաղաքականություն է մտել հասարակական հատվածում երկար տարիներ աշխատելուց հետո: Զուգահեռ զբաղվել է նաև փաստաբանական գործունեությամբ:

- Կարծում եք՝ կանանց նկատմամբ խտրականությո՞ւն կա Հայաստանում:

- Գիտեք, ես ինքս ինձ վրա երբևէ չեմ զգացել՝ անկեղծ ասած: Ու օրենսդրական առումով խտրականությունը՝ որպես այդպիսին, տեսանելի չէ: Այսինքն՝ օրենքները հավասար իրավունքներ են տալիս և՛ կանանց, և՛ տղամարդկանց:

Բայց մի ուրիշ բան էլ պիտի անպայման շեշտեմ՝ դա կնոջ մտածելակերպն է, այսինքն՝ մեր հասարակությունում կինը, այսպես ասեմ՝ կանանց որոշակի խումբ դեռևս պատրաստ չէ օգտվելու հավասար իրավունքներից: Եթե կնոջը փոքր տարիքից դաստիարակում են, որ դու պետք է լինես հնազանդ, հեզ, իսկ հասարակական կյանքին կմասնակցի այնքանով, որքանով թույլ կտա իր ժամանակը, կամ որքանով թույլ կտան ընտանիքի անդամները, ապա դժվար է նրանից քաղաքական ակտիվություն ակնկալել: Ինչպե՞ս կարող ենք կնոջից պահանջել, որ նա վստահի իր ուժերին, եթե մեր դասագրքերում երևի թե միայն Այծեմնիկի մասին պատմությունն է, որտեղ կինը մարտնչողի դերում էր: Ունենք կարծրացած մտածելակերպը հաղթահարելու խնդիր: Եվ չպետք է քննադատել միայն տղամարդկանց, ասել, որ թույլ չեն տալիս մեզ աշխատել, գործել: Որքանո՞վ է ինքը՝ կինը, այսօր պատրաստ և ուզում մասնակցել քաղաքական կյանքին:

- Այս առումով հետաքրքիր է Ձեր՝ որպես գլխադասային հանձնաժողովի ղեկավարի դիրքորոշումը «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրինագծի երկրորդ ընթերցման վերաբերյալ:

- Միանշանակ դրական եմ տրամադրված: Այս պահին արդեն ծանոթացել եմ ՀԿ-ների կողմից արված առաջարկներին, գիտեմ նաև, որ դրանցից ոչ բոլորն են ընդունելի կառավարության համար: Ի դեպ, ըստ իս՝ դրանք բավական արժեքավոր են, և իմ առաջին առաջարկը կլինի այն, որ դրանք ընդգրկվեն առաջին ընթերցում անցած նախագծում: Աշնանային նստաշրջանում բոլոր դեպքերում քննարկելու ենք…

Լիա Խոջոյան,
Հասմիկ Հարությունյան

Ձայն բազմաց

Ինչպե՞ս են քվեարկել կանայք եւ տղամարդիկ

Նորընտիր Ազգային ժողովում կին պատգամավորների ամենացածր ներկայացվածությունն ապահոված «Բարգավաճ Հայաստանի» օգտին քվեարկած ընտրողների մեծ մասը կանայք են եղել: Համենայն դեպս, դա են վկայում մայիսի 6-ին՝ խորհրդարանական ընտրությունների օրը, Հայաստանում առաջին անգամ իրականացված «էքզիթ-փոլի» արդյունքները:

Ինչպես հայտնի է, հարցումը կազմակերպվել էր հայտնի Gallup համաշխարհային ասոցիացիայի կողմից: Ընտրատեղամասերից դուրս եկող քաղաքացիներին ընդամենը մեկ հարց էին ուղղում՝ թե ո՛ր կուսակցության օգտին են քվեարկել:

Հարցմանը մասնակցել էր 22 հազար ընտրող, սակայն համաձայնել են պատասխանել հարցվածներից 12 հազարը: 10 հազարը հրաժարվել են, ինչը կազմում է 40%: Այս թիվը 15%-ով ավելի է այլ երկրների հետ համեմատած: Gallup ասոցիացիայի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Արամ Նավասարդյանը մեզ հետ զրույցում նշեց, որ դա նաև ինչ-որ իմաստով կանխատեսելի էր, եթե հաշվի առնենք, որ «էքզիթ-փոլն» առաջին անգամ էր անցկացվում Հայաստանում, և մարդիկ, բնական է, զգուշանում էին…

Բոլոր դեպքերում հարցումը հնարավորություն տվեց ոչ միայն նախքան քվեարկության արդյունքները հրապարակելը իմանալ ընտրությունների մոտավոր պատկերը, այլ նաև պարզել՝ ինչպե՞ս են քվեարկել այս կամ այն կուսակցության օգտին կանայք և տղամարդիկ:

Ըստ «էքզիթ փոլի»՝ կանայք ավելի շատ են համակրում ԲՀԿ-ին: Այս կուսակցության օգտին քվեարկած ընտրողների մեծ մասը կանայք են եղել:

Ի տարբերություն ԲՀԿ-ի՝ ՀԱԿ-ին տղամարդիկ են ավելի շատ ձայն տվել: Կին ընտրողներից միայն 5,3%-ն է իր ձայնը տվել ՀԱԿ-ին, իսկ տղամարդկանց՝ 7,9%-ը:

Գրեթե հավասար թվով կանայք ու տղամարդիկ են քվեարկել ՀՅԴ-ի օգտին. 5,5% տղամարդիկ, 4,7% կանայք:

Կանայք ավելի շատ են վստահել նաև ՕԵԿ-ին, նրան ձայն է տվել կին ընտրողների 6,4%-ը, տղամարդկանց՝ 5,2%-ը:

Նույն պատկերն է նաև «Ժառանգություն» կուսակցությունում. 6,9% կանայք են ընտրել, 5,9% տղամարդիկ:

Հավասար թվով են ընտրել Հանրապետական կուսակցությանը. «էքզիթ փոլի» արդյունքներով՝ կին ընտրողների 42,5%-ն իր ձայնը տվել է ՀՀԿ-ին, տղամարդ ընտրողների 43,3%-ը:

Իհարկե, բացի «էքզիթ-փոլի» արդյունքներից, կանանց և տղամարդկանց ընտրական նախապատվությունների տարբերության մասին պատկերացումը կարելի է ստանալ նախընտրական շրջանում կատարված սոցիոլոգիական հարցումների միջոցով՝ բացառելով այն ֆենոմենալ դեպքերը, երբ ընտրողն ասում է մի բան, մտածում՝ ուրիշի մասին, իսկ քվեարկում երրորդի օգտին:

Մարիամ Մուղդուսյան

Խմբագիր՝
Թամարա Հովնաթանյան

էլ. հասցեն՝
promediagender_arm@yahoo.com

Սեքսիզմ

Կինը «նի՞խտ պոլիտիկ»

Անցած ընտրությունների յուրահատկություններից մեկը թերևս սեքսիզմի անթաքույց դրսևորումն էր կին թեկնածուի նկատմամբ:

Թիվ 1 ընտրատարածքում առաջադրված թեկնածու Ռուբեն Հայրապետյանը ի պատասխան իր մրցակից Գայանե Առուստամյանի՝ բանավիճելու առաջարկին ասել էր, որ չի բանավիճի նրա հետ, «որովհետև նա կին է», բացի այդ, «վախենում է, որ նա կարող է իրեն ճանկռտել»… Հատկանշական է, որ Առուստամյանի տղամարդ կոլեգաները փաստը դատապարտելու փոխարեն շտապեցին իրավիճակը հարթել՝ իրենց թեկնածություններն առաջարկելով Հայրապետյանի հետ բանավիճելու համար: Իսկ թե ինչպե՞ս արձագանքեցին սեքսիզմի այս դրսևորմանը կին թեկնածուները՝ կարող եք կարդալ WomenNet.am կայքում:

Նշենք նաև, որ քաղաքական բանավեճը կեղծ ջենտլմենական դաշտ տեղափոխելու անընդունելի փորձերը առաջին անգամ չէ, որ արվում են մեզանում: Ժամանակին Գագիկ Բեգլարյանը Կենտրոն համայնքի տեղական ընտրություններում իրեն մրցակից կնոջ՝ ՀԺԿ անդամ Ռուզան Խաչատրյանի հասցեին հայտարարել էր. «Ամոթ է կնոջը պարտվելը»…

USAID FROM THE AMERICAN PEOPLE
COUNTERPART INTERNATIONAL

Այս համարի հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաուընթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության պայմանագրերի շրջանակներում, «ՊրոՄեդիա-Գենդեր» ՀԿ-ի միջոցով:

Համարում զետեղված նյութերի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են «ՊրոՄեդիա-Գենդեր» ՀԿ-ի հեղինակներին, և հնարավոր է՝ չհամընկնեն Քաուընթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ ՄԶԳ և ԱՄՆ կառավարության տեսակետներին: